

Լենա Լեհտոլայնեն

ԹԻԿՆԱՊԱՐ ԿԻՆԸ



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2014



This work has been published with the financial assistance
of FILI – Finnish Literature Exchange
FILI – Finnish Literature Exchange on tukenut tämän kirjan
kääntämistä

Leena Lehtolainen, Henkivartija, 2009

Լեհտոլայնեն, Լ.

Թիկնապահ կինը - Եր.: Գիտանք, - 2014, 320 էջ

Մոսկվայում սպանվել է գործարար ֆիննուհի Անիտա Նուտի-
նենը: Նրա թիկնապահ Հիլյա Իլվեսկերոն, չվստահելով ռու-
սական և ֆիննական ոստիկաններից, նախաձեռնում է իր տի-
րուհու սպանության սեփական հետաքննությունը...

Լենա Լեհտոլայնենը սկանդինավյան դետեկտիվ գրականու-
թյան դասական է՝ *Ֆինլանդիայի քրեավեպի թագուհի*: 30 լեզ-
վով թարգմանված և 2 միլիոն տպաքանակով վաճառված
գրքերի հեղինակ է, բազմաթիվ գրական մրցանակների դափ-
նեկիր: Նրա վեպերը հեռուստասերիալի հիմք են ծառայել և
միշտ դասվում են լավագույնների առաջին տասնյակում: Լե-
տոլայնենի հերոսուհիների ներխուժումը տղամարդու մասնա-
գիտության ոլորտ յուրահատուկ հմայք է հաղորդում նրա քրե-
ավեպերին:

ISBN 978-9939-810-24-9

© *Leena Lehtolainen 2009*

Original edition published by Tammi Publishers

Armenian edition published by agreement with Tammi Publishers &

Elina Ahlback Literary Agency, Helsinki, Finland.

© *Գիտանք*, հայերեն թարգմանության և ձևավորման համար, 2014

Լուսան: Ֆիններեն՝ Ilves: Խորվաթերեն՝ Ris: Նորվեգերեն՝ Gaupe, գերմաներեն՝ Luchs: Ես տարբերում եմ իրարից կատվանման լուսանին, աղվեսանման լուսանին և գայլանման լուսանին. նույն լուսանն է, բայց մորթու աննշան տարբերությամբ, որը ճանաչում եմ առանց տատանվելու: Լուսանի հետքերը նույնպես ճանաչում եմ առաջին հայացքից: Հենց լուսանի պատճառով կորցրի աշխատանքս: Սպասարկյալիս անունը Անիտա Նուտինեն է, և մեկ տարի է նրա թիկնապահն եմ: Այդ օրը նա ցանկացավ իր աչքով տեսնել Ֆաբերժեի ձվերի կրկնօրինակները, որոնք վաճառվում էին ոսկեղենի խանութում: Խանութը Մոսկվայի մի գլխավոր փողոցում գտնվող շքեղ վաճառակենտրոնում էր, որի բոլոր այցելուները պետք է անցնեին մետաղափնտրիչ շրջանակով: Հնչեց ազդանշանը, և ինձ խնդրեցին մի կողմ դնել 9 տրամաչափի *Գլորը*:

Ապարդյուն փորձեցի բացատրել մինչև ատամները զինված պահնորդին, որ դա իմ աշխատանքի գործիքն է: Անիտայի հետ խանութ մտնելու համար պետք է հանձնեի գեներս:

- Այստեղ զենքով չեն մտնում, վտանգավոր է, - ասաց պահնորդներից մեկը կոտրատված անգլերենով:

Սուտ է: Ամեն ինչ գնվում է ու վաճառվում. բավական է մի քանի դոլար տալ, և ցանկացած զինված մարդ հեշտությամբ ներս կմտնի: Բայց Անիտան պատրաստ էր վտանգի դիմելու:

- Ուզում եմ մտնել: Ես եմ վտանգին ենթարկվողը: Ուրեմն ես եմ որոշում:

Նա ժպտաց, բայց ասածը հրաման էր: Ես լուռ ենթարկվեցի:

Անիտան արագ ընտրեց գատկի ձուն: Քիչ մնաց շնչահեղձ լինեի, երբ նա առանց աչքը թարթելու վճարեց գումարը, որը հավասար էր իմ երեք ամսվա վարձատրությանը: Իհարկե, դա Ֆաբերժեի իսկական ձու չէր. բնօրինակը կարժեճար իմ տասը տարվա աշխատավարձի չափ: Բայց Անիտան դրանով չբավարարվեց և որոշեց մտնել հարևան խանութը, որտեղ մուշտակ էին վաճառում:

Ես սպասարկյալներիս խորհուրդ եմ տալիս չկրել չափից դուրս աչքի ընկնող հագուստ. հատկապես, թանկարժեք մորթեղեն: Բայց Անիտան երբեք հաշվի չէր առնում խորհուրդս:

Ինձ համար զգվելի էին նրա թիկնոցները ջրաքիսի և արծաթագույն աղվեսի մորթուց, թեև ես հանդուրժում էի դրանք ու լռում: Սակայն լուսանի մորթուց մուշտակը համբերությանս բաժակը լցրեց. դա չէի կարող հանդուրժել:

Լուսանը ռուսերեն րօւօ է: Անիտային դուր եկած մուշտակի համար անհրաժեշտ էր եղել մոտ քսան լուսան սպանել: Այդ մտքից զարկերակս արագացավ, մլարը պատեց աչքերս: Խոր շունչ առա՝ փորձելով հանդարտվել: Ժամանակին սովորել էի կարգավորել շնչառությունս, բայց այժմ դա ինձ չէր օգնում: Անիտան փորձեց մուշտակը: Երկու վաճառողուհին իրար էին անցել նրա շուրջը՝ փեշերն ուղղելով և օգնելով կոճկել: Այդ պահին հեշտությամբ կարող էին դանակ խրել պաշտպանյալիս սիրտը կամ թույն ներարկել: Ես պարտավոր էի մոտենալ, բայց տեղիցս չշարժվեցի:

- Lynx, very beautiful! - մոմռաց Անիտան և դառնալով իմ կողմը՝ ֆիններեն շարունակեց. - Ի՞նչ կասես, Յիլյա: Սեռագրավիչ է, չէ՞: Այս մուշտակով ինձ իսկական կատու եմ զգում:

Անիտան չզիտեր, որ մանկության տարիներին մեր տանը լուսան էր ապրում: Քիչ բան էի պատմել իմ մասին, և նա էլ առանձնապես չէր հետաքրքրվել: Անիտա Նուտինենին ընդհանրապես քիչ բան էր հետաքրքրում, բացի սեփական անձից:

- Այս մորթին գեղեցիկ է միայն լուսանի վրա: - Իմ ձայնում խիստ հանդիմանություն հնչեց, և Անիտան հանկարծի եկավ:

- Ինչ ասացի՞ր: - Նա ավելի ցանկասիրաբար փաթաթվեց մուշտակի մեջ ու շոյեց մետաքսաման մորթին: - Ասենք՝ քո կարծիքը ինձ առանձնապես չի հետաքրքրում: - Եվ դարձավ վաճառողուհիներին. - I'll take that, thank you!

Անիտան հանեց մուշտակը և սկսեց փնտրել վարկաքարտը: Քսակում չորս վարկաքարտ ուներ: Ֆաբերժեի ձվի համար վճարել էր *Ամերիքան էքսպրես* քարտով, հիմա *Վիզայի* հերթն էր: Երբ վաճառողուհին փաթաթում էր մուշտակը մետաքսե թղթի մեջ, ես տեսա, որ

նորածնության խորանին զոհաբերվածները կատվանման լուսաններ էին. ճանաչեցի սև բծերի բնորոշ շարքը ողնաշարին:

- Ջգուշացնում եմ, - շարունակեցի ես: - Ուզում եմ՝ իմանաս, որ եթե գնես այդ մուշտակը, ես իսկույն ևեթ հրաժարական կտամ:

- Այդ ի՞նչ ես ասում: - Անհիտան արագ շրջվեց, և վարկաքարտը փայլատակեց նրա մատների արանքում:

- Այն, ինչ լսեցիր. ես հրաժարվում եմ աշխատել այն մարդկանց համար, որոնց գործողությունները հակառակ են բարոյականության իմ սկզբունքներին:

- Սա ընդամենը մուշտակ է:

- Բայց լուսանի մուշտակ:

Անհիտան ինձ հառեց բարկացկոտ հայացքը: Տասնյակ, հարյուրավոր անգամ նրան տեսել էի գործընկերների գլխին լուտանքների տեղալիս, վաճառողներին և սպասարկողներին կշտամբելիս՝ անբանիմացության ու անշնորհքության համար: Անհիտան փող ուներ և ուզում էր այդ փողի դիմաց լավագույնը ստանալ: Այնինչ ես՝ նրա ծառայողը՝ ենթական, հակադրվեցի նրան, հանդգնեցի բարոյականության խրատ կարդալ:

- Շատ լավ, բայց սա կլիմի ի՞նչ որոշումը, - նետեց նա ինձ թունոտ ձայնով: - Հրաժարականդ պետք չէ. այդ ես եմ քեզ հեռացնում: Եվ հե՛նց հիմա:

- Թքա՛ծ ունեմ, - ճչացի ես:

Այնքան կատաղած էի, որ նույնիսկ քրտնեցի: Բռունցքներս սեղմած՝ հագիվ էի զսպում մուշտակների կանգնակներին ոտքով խփելու և հայելիները փշոելու ցանկությունը:

Վաճառողուհիները քար կտորած մեզ էին դիտում. հետնասենյակից հայտնվեց մի մկանուտ բեղավոր տղա՝ խանութի պահնորդը, պարուրված թթու դրած կաղամբի կաչուն հոտով: Բնականաբար, ո՛չ պահնորդը, ո՛չ վաճառողուհիները բառ իսկ չէին հասկանում մեր ֆիններեն լեզվակովից, բայց շատ պարզ տեսնում էին՝ ում ձեռքում է փողը: Ուստի պահնորդը մոտեցավ ինձ:

- Уйдите, - ասաց ռուսերեն: Գոնե քաղաքավարություն ունեցավ դուք-ով դիմելու:

- Հույս չունենա՞ս, որ կարգին երաշխավորագիր կստանաս, - ճչաց ասերից դուրս եկած Անիտան: - Ֆինլանդիայում այլևս երբեք աշխատանք չե՞ս գտնի:

- Դու այդքան զորեղ չես, որքան կարծում ես, - պատասխանեցի՝ աներևակայելի ճիգ գործադրելով, որպեսզի ձեռքիս կառչած պահնորդին չծեփեն հայելուն:

Վաճառակենտրոնի ելքի մոտ հետ ստացա *Գլոբլը*՝ անտեսելով զարմացած պահնորդների հարցերը, թե ուր է իմ տիրուհին: Անիտայի հետ ուղևորությունների ժամանակ սկսել էի մի քիչ ռուսերեն հասկանալ և իմ սիրելի բառն էր դարձել *дурак*-ը: Դա էլ նետեցի երկրորդ պահնորդի երեսին, որը փորձում էր փակել ճամփաս: Մեր վարորդը վեր թռավ և նետվեց դուռը իմ առաջ բացելու, բայց ես լուռ անցա ինքնաշարժի կողքով: Մինչև հյուրանոց, որտեղ իջևանել էինք, մեկ կիլոմետրից պակաս էր: Մոսկվայի քարտեզը լավ հիշում էի, այնպես որ հեշտությամբ գտա ճանապարհը: Վերելակով բարձրացա տասներորդ հարկ: Անիտան և ես դռնով անջատված հարևան սենյակներ էինք զբաղեցնում. նա կտրականապես հրաժարվում էր քնել ինձ հետ նույն սենյակում, բայց ես պետք է միշտ հասանելի լինեի: Նույնիսկ մանկախոս էի երբեմն օգտագործում՝ նրա անվտանգությունը առավելագույնս ապահովելու համար:

Իմ հրաժարականը բավականին հաջող ժամանակ ստացվեց. այսօր սեպտեմբերի մեկն էր, օգոստոսի աշխատավարձս նախորդ շաբաթ փոխանցվել էր դրամատան հաշվիս, և ես չէի անհանգստանում, թե Անիտան կնոռանա դա անել: Թեև մի հնարք կգտներ՝ պարզևավճարը չվճարելու համար: Որոշեցի պարզել, թե արդյոք հնարավոր է այսօրվա չվերթի տոմս գնել, և մտա համացանց: Ազատ տեղ կար միայն օդանավի էժան կարգում: Անիտան և ես եկել էինք գործարար կարգում: Վերադարձը նախատեսված էր չորեքշաբթի օրը, և եթե որոշեի փոխել օրը, ապա ստիպված կլինեի լրացուցիչ մեծ գումար վճարել: Գուցե գնացքո՞վ գնամ: Ձանգահարեցի կայարան: Երեկոյան գնացքի տոմս նույնպես չկար, բայց վաղվա գնացքում տեղ գտնվեց. ինձ նույնիսկ առաջարկեցին ե-

րկտեղանոց կառքախցիկ վերցնել: Տոմսը գնեցի, այնուհետև զանգեցի հարևան հյուրանոցը և գիշերվա համար սենյակ պատվիրեցի: Իրերս գցեցի ճամպուրակը և դուրս գնացի՝ Անիտային նույնիսկ երկտող չթողնելով: Հենց որ հիշում էի լուսամի մորթուց մուշտակը, իմ հոգում այնպիսի զայրույթ էր բռնկվում, որ այլևս - չէի կարողանում մտածել նախկին տիրուհուս մասին: Բանալին նետեցի ընդունասեղանին ու արագ հեռացա՝ ուշադրություն չդարձնելով աշխատողին, որը փորձում էր հետևից ինչ-որ բան ասել: Անտեսեցի նաև ելքի մոտ հաճախորդ որսացող տաքսու վարորդներին և ոտքով գնացի հարևան հյուրանոցը: Սենյակը շատ փոքր էր, ծխախոտի գարշահոտով ապականված, բայց մի գիշեր յուր կտաներ:

Բջջախոսս զնգաց: Անիտան էր: Չպատասխանեցի: Իջա հյուրանոցի ճաշարան և խորտիկներ պատվիրեցի՝ խավիարով նրբաբլիթ, թթու վարունգ, մեղր, թթվասեր և աղցան՝ անտառի սնկով: Եվ օղի: Վրացական կարմիր գինի գինեցանկում չկար. ըստ երևույթին այդ երկրի հետ ռազմական բախման պատճառով: Փոխարենը առաջարկվում էր Լիտվայի թունդ գարեջուր: Մեկ շիշը դատարկեցի և երկրորդը պատվիրեցի:

Սկզբից ևեթ Անիտան հակակրանք էր առաջացնում, բայց ես երբեք թույլ չէի տալիս, որ զգացմունքները խանգարեն աշխատանքիս:

Յոթ տարի առաջ ես գերազանց թվանշաններով ավարտեցի պահնորդների դպրոցը Նյու Յորքում: Ֆինլանդիայում շատ քիչ կին կար այդ ոլորտում, ուստի և կարող էի առանց շտապելու ընտրել լավագույն աշխատանքը: Անիտան միջինից երկու անգամ ավելի աշխատավարձ առաջարկեց, և ես համաձայնեցի: Ամեն ամիս նա մեկնում էր Մոսկվա կամ Սանկտ Պետերբուրգ և թիկնապահի կարիք ուներ: Անշարժ գույքին վերաբերող նրա գործարքները գրեթե ապօրինի էին, բայց, քանի դեռ չէի խառնվում նրա գործերին, վտանգ չկար, թե կկորցնեմ թույլատրագիրս: Առանց Անիտայի երաշխավորագրի այժմ դժվար կլիներ նոր գործ գտնել: Իմ արարքը շատ կզարմացներ Մայք Վիրթյուլին՝ Քուինզի

դպրոցի գլխավոր մարզիչին: Մայքը մի ոսկի կանոն ուներ. թիկնապահը պետք է անպայման լավ համբավ ունենա: Նա ասում էր, որ ինչ ասես կարող է պատահել, օրինակ՝ թիկնապահը նույնիսկ սեփական կյանքի գնով չկարողանա փրկել սպասարկյալին մի տասնյակ դարանակալած դիպուկահարների փամփուշտներից, բայց նա ոչ մի դեպքում իրավունք չունի կորցնելու սպասարկյալի վստահությունը: Գարեջրի երկրորդ շիշը դատարկելիս ինձ թվաց, թե լսում եմ Մայքին գլխիս քարոզ կարդալիս:

Անհիտան շարունակ փորձում էր կապվել ինձ հետ: Հավանաբար ուզում էր, որ վերադառնամ: Տրամաբանական էր: Ես չափազանց շատ բան գիտեի ինչպես նրա, այնպես էլ նրա առանձնատան և անշարժ գույքի գործակալության անվտանգության համակարգի մասին: Եթե իսկապես ցանկանայի մի քանի տարի առանց աշխատելու ուրախ-զվարթ ապրել, ապա կարող էի ընդամենը վաճառել այս բացառիկ տեղեկույթը այն անձին, որը ամառվա սկզբին բազմիցս սպառնացել էր Անհիտային:

Համառության շնորհիվ ինձ հաջողվեց Անհիտայից իմանալ, թե ով է նրա թշնամին. թիկնապահը պետք է հանցագործի պես մտածի, որպեսզի կանխատեսի նրա գործողությունները և դրանից հետո աչքը միշտ սպասարկյալի վրա պահի: Անհիտան մենակ էր ապրում, և ես ստվերի պես հետևում էի նրան: Պավո Նուտիմենը շատ տարիներ առաջ անհետացել էր նրա կյանքից և ապրում էր Արևելյան Լապլանդիայի մի խուլ անկյունում, իսկ նրա միակ դուստրը՝ Սեսիլիան, ապրում էր Հոնկոնգում: Ես այլևս չէի հաշվում, թե քանի գիշեր եմ անցկացրել նրա հսկայական (ամենաքիչը՝ 200 քառակուսի մետր) առանձնատանը, որը հեռու չէր Հելսինկի կենտրոնից: Նախ փոխեցի անվտանգության համակարգը, քանի որ տիրուհուս սպառնացողը, ըստ երևույթին, նախկին սիրեկանն էր, որը հաճախ էր եղել նրա տանը և տեղյակ էր ամեն ինչին: Դա Մոսկվայի անշարժ գույքի արքաներից մեկն էր՝ Վալենտին Ֆյոդորովիչ Պասկևիչ անունով, ում Անհիտան խիստ զայրացրել էր՝ նրանից խարդախությամբ կորզելով Հարավային Կարելիայում գտնվող նրա ամառանոցային համալիրներից մեկը:

Բջջախոսս զնգաց: Դարծյալ Անիտան էր: Թող զանգի: Ի՞նչ է, վախենո՞ւմ է առանց ինձ: Երկյուղո՞ւմ է ամեն անցնող ինքնաշարժից: Խո՞ւյս է տալիս ամեն անցորդից: Երևի վերադարձել է հյուրանոց և փակվել սենյակում բանալու երկու պտույտով: Վարորդը՝ Սերգեյ Շաբալինը, միշտ անթերի ծառայել է Անիտային, բայց այդ լավ Սերյոժան հավանաբար ունի իր գինը. ո՞վ գիտի, թե նա չի վաճառել իր ծառայություններն ու հոգին ավելի շատ առաջարկողին: Անիտան հիանալի ծանոթ էր համակարգին և դրա կանոններին. անվտանգության լավագույն երաշխիքը ստանում է նա, ով ավելի շատ է վճարում: Եվ համոզված էր, որ աշխարհում բոլորը հենց այդ կարծիքին են. պաշտպանում են լոկ սեփական կաշին ու քսակը: Ես ուժեղ էի և աչալուրջ, բայց դիտավորյալ միջակ խելքի տեր էի ձևանում: Անիտայի առավելագույն անվտանգությունն ապահովելու համար հանգամանորեն նշում էի նրա բոլոր տեղափոխումներն ու հանդիպումները: Բայց իմ հավաքած տեղեկությի շնորհիվ ես կարող էի ցանկության դեպքում դժոխքի վերածել նրա կյանքը: